CALIFORNIA High-Speed Rail Authority

PUBLIC NOTICE

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆԱԽԱԳԻԾ/ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ

Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու նախագիծ

Burbank-ից Los Angeles նախագծային հատված

ՍԱԼԱՀՐ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ/ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու իշխանությունը (California High-Speed Rail Authority [Authority]) հայտարարում է ՍԱԼԱՀՐ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ/ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ (EIR/EIS) առկայությունը Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու նախագծի Burbank-ից Los Angeles նախագծի հատվածի համար: Սևագիր EIR/EIS-ը պատրաստվել է և առկա է դարձվում և՛ Կալիֆորնիայի միջավայրի որակի օրենքի (California Environmental Quality Act, CEQA) և՛ Միջավայրի ազգային քաղաքականության օրենքի (National Environmental Policy Act, NEPA) համաձայն:

Burbank-ից Los Angeles նախագծային հատվածի Սևագիր EIR/EIS-ը և հարակից փաստաթղթերը հանրության տրամադրելի կլինեն մայիսի 29, 2020 թվին:

Burbank-ից Los Angeles նախագծային հատվածի Սևագիր EIR/EIS-ը PDF ձևաչափով տրամադրելի է առցանց՝ Իշխանության կայքէջում (www.hsr.ca.gov)
կամ կարող եք պատճենը խնդրել զանգահարելով (877) 977-1660 համարով:

Այս նախագծի համար կիրառելի դաշնային միջավայրային օրենքներով պահանջվող միջավայրային վերանայումը, խորհրդակցությունը և այլ գործողություններ իրականացվում են կամ իրականացվել են Կալիֆորնիա նահանգի կողմից՝ 23 ԱՄՆ օրենսգրքի 327-ի և հուլիսի 23, 2019 թվակիր Հասկացողության հուշագրի (MOU) համաձայն, և գործադրվել են Երկաթուղու դաշնային վարչության (Federal Railroad Administration, FRA) և Կալիֆորնիա նահանգի կողմից: MOU-ի ներքո, Իշխանությունը նախագծի գլխավոր գործակալությունն է NEPA-ի ներքո: Հուլիսի 23, 2019 թվի MOU-ից առաջ, FRA-ն էր գլխավոր դաշնային գործակալությունը: Իշխանությունը գլխավոր գործակալությունն է նաև CEQA-ի ներքո:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ՎԱՅՐԸ

2005 թվին ավարտվել է նահանգային մակարդակով (1-ին Աստիճան) EIR/EIS՝ որպես առաջարկված Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու (HSR) համակարգի համար աստիճանավոր միջավայրային վերանայման գործընթացի առաջին փուլ, ինչը ծրագրվել է ապահովելու համար վստահելի արագընթաց էլեկտրաշարժ երկաթուղային համակարգ, որը միմյանց կկապի նահանգի գլխավոր քաղաքային տարածաշրջանները և կապահովի կանխատեսելի և հետևողական ուղևորության ժամանակներ: Մեկ ուրիշ նպատակ է ապահովումը առևտրի օդանավակայանների, զանգվածային տարանցման և մայրուղիների ցանցի փոխգործողության և թեթևացումը առկա փոխադրական համակարգի կարողության լարվածությունների, քանի որ Կալիֆորնիայում միջքաղաքային

ուղևորության պահանջարկն աճում է՝ Կալիֆորնիայի եզակի բնական աղբյուրների նկատմամբ զգայուն և պաշտպանող եղանակով: 2008 թվին ավարտվել է մի երկրորդ ծրագրի մակարդակով (1-ին Աստիճան) EIR/EIS, կենտրոնանալով Bay Area-ի և Central Valley-ի միջև կապի վրա. Իշխանությունը այս փաստաթուղթը վերամշակեց CEQA-ի ներքո և այն լրացրեց 2012 թվին: Հիմնվելով ծրագրի EIR/EIS-ների վրա, Իշխանությունը ընտրեց նախընտրելի միջանցքներ և կայարանների վայրեր՝ հավելյալ ուսումնասիրության նպատակով առաջ անցնելու համար:

Իշխանությունը պատրաստել է նախագծի մակարդակով (2-րդ Աստիճան) EIR/EIS, ինչը հավելյալ ուսումնասիրության է ենթարկում Burbank-ից Los Angeles նախագծային հատվածը: Մոտավորապես 14 մղոնանոց Նախագծային հատվածը HSR-ի սպասարկում կապահովի Burbank-ում Burbank օդանավակայանի կայարանի և Los Angeles-ում Los Angeles Union Station-ի միջև: Այս HSR-ի կայարանները կապեր կապահովեն տարածաշրջանային և տեղական զանգվածային տարանցիկ սպասարկությունների, ինչպես նաև կապ օդանավակայանների և մայրուղային ցանցերի հետ՝ San Fernando հովտում և Los Angeles ավազանում: Նախագծային հատվածը իրար կմիացնի ամբողջ նահանգի HSR համակարգի Հյուսիսային և Հարավային բաժինները:

Սևագիր EIR/EIS-ը գնահատում է ազդեցություններն ու օգուտները Նախագծի ոչ մի այլընտրանքի և մեկ Կառուցման այլընտրանքի: Իշխանության Նախընտրած այլընտրանքը NEPA-ի ներքո, ինչը ծառայում է որպես CEQA-ի համար առաջարկված նախագիծ, HSR-ի Կառուցման այլընտրանքն է: Նախընտրելի այլընտրանքը ներառում է մի նոր կայարան Hollywood Burbank օդանավակայանի մոտ, փոփոխություններ Los Angeles Union Station-ում (ուղևորատար հարթակների բարձրացում և վերգետնյա էլեկտրալարերի համակարգ), առկա երկաթուղային միջանցքում նոր էլեկտրականացված երկաթգծեր (որոնք կհամօգտագործվեն Metrolink-ի և Amtrak-ի հետ), մի ստորանցք Hollywood Burbank օդանավակայանի տակ (Թռիչքուղի 8-26, Կանգառուղի D, և առաջարկված երկարաձգված Կանգառուղի C), և քարշուժը փոխող շինություններ:

ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախքան մեղմացվելը, HSR Կառուցման այլընտրանքից առաջացող նշանակալի ազդեցություններ են նախատեսվում հետևյալ աղբյուրային ոլորտներում՝ փոխադրություն (շահագործման ազդեցություններ). օդի որակ և համաշխարհային կլիմայական փոփոխություն (շինարարական ազդեցություններ). աղմուկ և թրթռացում (շինարարական և շահագործման ազդեցություններ). էլեկտրամագնիսական դաշտեր և էլեկտրամագնիսական միջամտություն (շինարարական և շահագործման ազդեցություններ). հանրային կենցաղային սպասարկում և էներգիա (շինարարական և շահագործման ազդեցություններ). կենսաբանական և ջրային աղբյուրներ (շինարարական և շահագործման ազդեցություններ). ջրաբաշխական և ջրի աղբյուրներ (շինարարական և շահագործման ազդեցություններ). վտանգավոր նյութեր և թափոններ (շինարարական ազդեցություններ). անվտանգություն և ապահովություն (շահագործման ազդեցություններ). սոցիալ-տնտեսություն և համայնքներ (շինարարական և շահագործման ազդեցություններ). կայարանների ծրագրում, հողօգտագործում և զարգացում (շահագործման ազդեցություններ). պուրակներ, հանգստավայրեր և բաց տարածք (շինարարական և շահագործման ազդեցություններ). գեղագիտություն և տեսողական աղբյուրներ (շինարարական ազդեցություններ). և մշակութային աղբյուրներ (շինարարական ազդեցություններ):

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԱՅՐԵՐ

HSR-ի Կառուցման այլընտրանքում ներառված շինություններից մի քանիսը կգտնվեն Կալիֆորնիայի կառավարական օրենսգրքի (California Government Code [Cortese List]) 65962.5 Հոդվածի՝ վտանգավոր նյութերի/աղտոտիչների վայրերի ցուցակում թվարկված վայրերի վրա կամ մոտ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ

Իշխանությունն այս Սևագիր EIR/EIS-ը առկա է դարձնում համաձայն CEQA-ի և NEPA-ի, առնվազն 45-օրյա վերանայման և դիտողությունների ժամանակամիջոցով: Դիտողությունների ժամանակամիջոցում, դիտողությունները կարելի է ներկայացնել հետևյալ եղանակներով՝

- Փոստով հետևյալի ուշադրության՝ Burbank to Los Angeles Draft EIR/EIS Comment, 355 S Grand Avenue, Suite 2050, Los Angeles, CA 90071
- Իշխանության կայքէջի միջոցով (www.hsr.ca.gov)
- Էլ. փոստով հետևյալին՝ Burbank_Los.Angeles@hsr.ca.gov թեմայի դաշտում մուտքագրելով «Draft EIR/EIS Comment»:
- Բանավոր դիտողություն Burbank-ից Los Angeles նախագծային հատվածի համար ուղղակի հեռախոսագծի միջոցով՝ (877) 977-1660 համարով:
- Հանրային լսումի ժամանակ բանավոր վկայություն կկայանա հուլիսի 8, 2020 թ. կ.ե. 3:00-ից 8:00-ը:

Դիտողության ժամանակամիջոցը կսկսվի մայիսի 29, 2020 թվին և կավարտվի հուլիսի 16, 2020 թվին: Դիտողությունները պետք է ստացվեն էլեկտրոնային եղանակով կամ փոստադրոշմակված լինեն հուլիսի 16, 2020 թվին կամ դրանից առաջ:

Հանրային վերանայման ժամանակամիջոցից հետո, Իշխանությունը կպատրաստի մի Վերջնական EIR/EIS, ինչը կներառի դիտողությունների ժամանակամիջոցում ստացված դիտողությունների պատասխանները:

ԱԶԱՏ ՀԱՎԱՔ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

COVID 19 Ի ԹԱՐՄԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Թագավարակին վերաբերող հանրային առողջապահության և անվտանգության պահանջմունքների հետևանքով, **հանրային ազատ հավաքը** կկայանա առցանց և հեռախոսի միջոցով, հունիսի 18, 2020 թվին կ.հ. 5:00 7:30 Ին, և **հանրային լսումը** կկայանա առցանց և հեռախոսի միջոցով հուլիսի 8, 2020 թվի կ.հ. 3:00 8:00 ին:

Նոր թագավարակի տարածումից հետո (այստեղ վկայակոչվում է որպես COVID-19) Կալիֆորնիայում (և երկրագնդով մեկ), մարտի 17, 2020 թվին, Կալիֆորնիայի Կառավարիչ Gavin Newsom-ը հրահանգներ հայտարարեց COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու անհրաժեշտությունը նշելու համար, ներառյալ՝ որևէ չափի հավաքի արգելումը: Բացի այդ, Կառավարիչ Newsom-ը մարտի 19, 2020 թվին թողարկեց N-33-20 Գործադիր հրամանը, որը Կալիֆորնիա նահանգում բնակվող բոլոր անհատներին հրամայում է մնալ տանը կամ իրենց բնակության վայրում, անմիջապես և մինչև հետագա ծանուցում: Համապատասխանելու համար Կառավարչի հրահանգներին և N-33-20 Գործադիր հրամանին, և պաշտպանելու համար հանրության առողջությունը, ազատ հավաքի և հանրային լսումի անձամբ ներկայանալու ավանդական ձևը կփոխվի համացանցով «վիրտուալ» ձևի, իրականացվելով առցանց և հեռախոսի միջոցով:

Իշխանությունը հրավիրում է ձեզ, որ մասնակցեք հունիսի 18, 2020 թվի համար նշանակված վիրտուալ ազատ հավաքին: Ազատ հավաքը կընդգրկի նախագծի ընդհանուր ակնարկ և փոխներգործուն հարցերի և պատասխանների նիստ: Համացանցով վիրտուալ հանրային լսումը նշանակվել է հուլիսի 8, 2020 թվին: Հանրային լսումը հանրության անդամների համար կապահովի պաշտոնական բանավոր վկայություն ներկայացնելու պատեհություն: Հեռախոսի միջոցով զանգահարման համարի շնորհիվ ներկայացված բանավոր դիտողությունները կձայնագրվեն դատարանի պաշտոնական թղթակցի կողմից:

Հավելյալ տեղեկության համար խնդրում ենք ստուգել Իշխանության կայքէջը (www.hsr.ca.gov), ներառյալ՝ նորագույն տեղեկությունները ծրագրված ազատ հավաքի և հանրային լսումի, ինչպես նաև դրանց մատչելու կերպի մասին: Տրամաբանական հարմարությունների և լեզվական ծառայությունների համար բոլոր խնդրանքները պետք է ներկայացվեն նշանակված հանդիպումների ամսաթվերից 72 ժամ առաջ: Խնդրում ենք կապ հաստատել Իշխանության՝ հանրության հետ շփվելու

խմբի հետ (877) 977-1660 համարով կամ զանգահարել Կալիֆորնիայի խոսքի փոխանցման սպասարկում (California Relay Service) 711 համարով:

ՍԵՎԱԳԻՐ EIR/EIS-Ի ՊԱՏՃԵՆՆԵՐԸ

Խնդրում ենք այցելել Իշխանության կայքէջը՝ (www.hsr.ca.gov) ներբեռնելու համար էլեկտրոնային պատճենը Սևագիր EIR/EIS-ի: Կարող եք նաև Սևագիր EIR/EIS-ի պատճենը խնդրել զանգահարելով (877) 977-1660 համարով:

Սևագիր EIR/EIS-ի տպագիր և/կամ էլեկտրոնային պատճենները և հարակից տեխնիկական տեղեկագրերի էլեկտրոնային պատճենները առկա կլինեն հետևյալ վայրերում, եթե պայմանները թույլատու լինեն, հաստատությունների աշխատանքային ժամերի ընթացքում (աշխատանքային օրերը/ժամերը կարող են կրճատվել՝ համապատասխանելու COVID-19-ի հանրային առողջապահության և անվտանգության հրահանգներին)՝

- Burbank
  - Buena Vista մասնաճյուղի գրադարան, 300 N Buena Vista Street
  - Northwest մասնաճյուղի գրադարան, 3323 W Victory Boulevard
  - Burbank-ի Կենտրոնական գրադարան, 110 N Glenoaks Boulevard
- Glendale
  - Grandview գրադարան, 1535 Fifth Street
  - Pacific Park և Համայնքային կենտրոն, 501 S Pacific Avenue
  - Glendale-ի Կենդրոնական գրադարան, 222 E Harvard Street
- Los Angeles
  - Atwater Village մասնաճյուղի գրադարան, 3379 Glendale Boulevard
  - Chinatown մասնաճյուղի գրադարան, 639 N Hill Street
  - Cypress Park մասնաճյուղի գրադարան, 1150 Cypress Avenue
  - Lincoln Heights մասնաճյուղի գրադարան, 2530 Workman Street
  - Little Tokyo մասնաճյուղի գրադարան, 203 S Los Angeles Street

Սևագիր EIR/EIS-ի տպագիր և/կամ էլեկտրոնային պատճենները և հարակից տեխնիկական տեղեկագրերի էլեկտրոնային պատճենները վերանայման համար առկա կլինեն աշխատանքային ժամերի ընթացքում Իշխանության Հարավային Կալիֆորնիայի տարածաշրջանային գրասենյակում Southern California Regional Office at 355 S Grand Avenue, Suite 2050, Los Angeles, CA հասցեով և Իշխանության կենտրոնատեղիում՝ 770 L Street, Suite 620 MS-1, Sacramento, CA հասցեով:

1-ին Աստիճանի փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները (877) 977-1660 համարով զանգահարելով խնդրվելու դեպքում առկա են Իշխանության գրասենյակում: 1-ին Աստիճանի փաստաթղթերը կարող են նաև վերանայվել Իշխանության գրասենյակում աշխատանքային ժամերի ընթացքում՝ 770 L Street, Suite 620 MS-1, Sacramento, CA 95814 և 355 S Grand Avenue, Suite 2050, Los Angeles, CA հասցեներով:

Հնարավոր է, որ Իշխանության գրասենյակներն ունենան կրճատված աշխատանքային օրեր/ժամեր, ինչպես պահանջվում է COVID-19-ի հանրային առողջապահության և անվտանգության հրահանգներով: Խնդրում ենք դիմել www.hsr.ca.gov կայքէջ՝ նորագույն տեղեկությունների համար:

Իշխանությունը խտրականություն չի գործադրում հաշմանդամության հիմքի վրա և, խնդրելուց հետո, տրամաբանական հարմարություն կմատուցի՝ երաշխավորելու իր ծրագրերի, ծառայությունների և գործունեությունների հավասար մատչելիությունը:



Աղբյուր՝ Իշխանություն 2019

Նկար 1 Նախագծի Burbank-ից Los Angeles հատված